ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից իրականացվող «Տարվա լավագույնները» 2022

մրցույթի նրկայացվող ծրագրի սեղմագիր

Ծրագրի անվանումը	Ռազմական ակումբ
Անվանակարգը	Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչական լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն
Ծրագրի ընդհանուր նկարագիր	Ռազմական ակումբը արդեն ունի մեկ տարվա պատմություն: Այս ակումբը ստեղծվեց ,որպեսզի աշակերտների մոտ էլ ավելի բարձրացնի ռամական գիտելիքները ,հմտությունները, սերն ու նվիրումը առ Հայրենիք:Այն նախատեսված է 8-9 դասարանի աշակերտների համար :Այս ծրագրի շրջանակներում սովորողները բացահայտում են,որոնում են,գտնում են նորը,կատարում են ռազմական վերլուծություններ ,մասնակցում են բազում մրցույթների: Այս նախագիծը տարբերվում է նրանով, որ յուրաքանչյուր ամիս դրվում էր մեր առաջ մեկ կամ երկու ռազմական ծրագիր , և երեխաները ,ովքեր ցանկություն են հայտնում, միանում են,եղել են նախագծեր ,որ մասնակցել են 6 աշակերտ ,եղել են նաև նախագծեր , որտեղ մասնակիցների թիվը հասել է մինչև 18աշակերտի:Երբեք մասնակիցներին չի պարտադրվել,նրանք իրենք են իրենց ցանկությամբ միացել և եղել է մի պայման ,եթե միանում ես ,գործը կիսատ թողնել չկա : Տարածաշրջանի լարված իրավիճակով պայմանավորված,հասկանում ենք, որ շատ կարևոր է ապագա սերունդի նվիրում հայրենիքին: Տարբեր նախագծերի մասնակցելով՝ մենք քայլ առ քայլ մոտենում ենք մեր երազանքների նոր ռազմական ծրագրերի իրականացմանը:

Ծրագրի նպատակ և խնդիրներ	Նպատակն է՝սովորողներին դարձնել ավելի ուժեղ թե՛ հոգեպես ,թե՛ ֆիզիկապես: Մեր խնդիրն է սերմանել Հայրենասիրական արժեքներ,որի ժառանգորդները կդառնան մերօրյա նոր հերոսները:Կկարողանան ամուր կառչել մեր մայր հողից և պաշտպանել իրենց հայրենիքը:Հայրենիքը կարժևորվի : Նոր սերունդը անպայման պետք է կարողանա հմտությամբ օգտվել զենքից,պիտի ֆիզիկապես պատրաստ լինի թե՛ կռվելու,թե՛ տուժածին օգնություն ցուցաբերելու,թե՛ տեղանքին ճիշտ կողմնորոշվելու գործում,ԱԹՍ-ի վարման ծրագրերին որպեսզի առաջնորդվեն մեկ գաղափարով հանուն հայրենիքի,հանուն վաղվա օրվա ազատ անկախ Հայաստանի:

Ակնկալվող արդյունքներ	Արդեն մեկ տարվա պատմություն ունեցող «Ռազմական ակումբ»-ի սովորողները հասել են այն սանդղակին, որ ոչ թե ակնկալվում են արդյունքները ,այլ փաստացի կան դրանք: Գիտակցում են մարզումների կարևորությունը ,դարձել են ֆիզիկապես և հոգեպես ավելի պատրաստված,կարողանում են տեղանքում կողմնորոշվել և կողմնացույցով և առանց կողմնացույցի,ցույց են տվել առաջին օգնություն ,սովորել են գոյատևման հմտություններ,եղել են սահմանին կանգնած զինվորի կողքին «Զինվորին ծանրոց» ծրագրի շրջանակներում,հավաքագրել են ռազմական նորություններ և կատարել են վերլուծություններ՝ մասնակցելով ռազմական ցուցահանդեսին, միտք է հղացել համագործակցելով «ԱՐՄԱԹ» լաբարատորիայի հետ, կյանքի կոչել մեր գծագրած ռոբոտը, ԱԹՍ դասերով պայմանավորված արդեն գծագրում են թռիչքի ուղղություններ և կատարում թռիչքներ և վայրէջքներ այն նույն խաղային ծրագրերի միջոցով,որոնցով իրականացնում են նաև ռեալ թռիչքներ,ձևավորել ենք պատի թերթեր և իրականացրել նախագծային աշխատանքներ :

Ծրագրի իրականացման պլան	• 2021թ սեպտեմբերի 21- Այց Ալավերդու հուշարձան • 2021թ հոկտեմբեր –Մասնակցություն «Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ » հիմնադրամի, ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ծրագիրի շրջանակում կազամկերպված մրցույթին: • 2021թ հոկտեմբեր-Այց ԱԻՆ: • 2021թ նոյեմբեր –Մեկամսյա ռազմական վարժանքներ ՈՄԱ հասարակական կազմակերպության հետ : • 2021թ դեկտեմբեր-Համագործակցային դասեր և միջառարկայական կապեր: • 2022թ հունվար- «Ծանրոց Զինվորին» և հունվարի 28-ին այց հուշարձան: • 2022թ հունվար-« Ռազմինֆո» տեղեկատվական անկյան բացում: • 2022թ փետրվար -Ուսուցիչների կրակային պատրաստության ուսուցում: Աշակերտները օգնում են ուսուցիչներին: • 2022թ փետրվար- ֆիլմի դիտումներ և խաղեր: • 2022թ մարտ -ԱԹՍ դասընթացի կազմակերպում և անցկացում: • 2022թ ապրիլի 2 -Այց «ԱՐՄ ՀԱՅ ԹԵՔ 2022 Էքսպո» ցուցահանդես,Ծիծեռնակաբերդ և Եռաբլուր: • 2022թ ապրիլի 23- Ջահերով երթ • 2022թ մայիս- Պատի թերթերի ստեղծում Սարդարապատ Խոնարհում Ստրատեգ Արքաներ: • 2022թ մայիս նախագծային աշխատանք «Հայտնի ու գուցե փոքր-ինչ մոռացված հայ զորավարներ» թեմայով :

Շարունակականության ապահովում	Ինչպես տեսնում եք Ռազմական ակումբը արդեն 1 տարեկան է և սահուն քայլերով գնում է առաջ ,ապահովելով ակումբի հետագա գործունեության շարունակականությունը:Առաջին անգամ «Տարվա լավագույն նախագիծ» արժանանալուց հետո սա ամենավառ ապացույցն է,որ իմ արածը գործ է,միայն թղթի վրա գրված բառեր չեն, որոնք կարող են մոռացվել և ես՝ ինքս ,իմ երկրի օրհասական պահին ամեն կերպ կաջակցեմ իմ երկրին և կլինեմ մեր զինվորների կողքին:
Ծրագրի սահիկաշար *(կցել ակտիվ հղումը)*	https://docs.google.com/presentation/d/12Cs687cG8IEtvlhhDO2Nq_NEpiBW3quH/edit?usp=sharing&ouid=116056865885065571094&rtpof=true&sd=true Սահիկաշարում ընդգրկված է մեկ տարվա աշխատանքը:

*Ծանոթություն

Ծրագրի սեղմագրի ընդհանուր ծավալը չպետք է գերազանցի 5 էջը:

Ծրագրի սահիկաշարը հղման տեսքով ներկայացնելը պարտադիր պահանջ է:

Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչվելու դեպքում՝ ծրագրի սահիկաշարը ենթակա է հրապարակման: